ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 68-Ա/3 «24» փետրվարի 2025թ.

«ԱՐԵԳԱԿ ԱՐԴԱՐ» ՍՊԸ- ԻՆ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հունվարի 23-ի որոշումը առ այն, որ «Արեգակ արդար» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացված հայտում եղել են անհամապատասխանություններ (դիմում հայտարարությունով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումով բացակայել է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող տեղեկատվությունը, իսկ թղթային ձևով ներկայացված հայտարարագիրը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, քանի որ մասնակիցը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ, ինչպես նաև ներկայացված դիմում հայտարարությունը նկար է եղել, քանի որ նշված փաստաթղթերի էլեկտրոնային թվային ստորագրությունը հնարավոր չէ եղել ստուգել, արդյոք նշված ստորագրությունը զետեղված է «Նույնականացման քարտի մասին» ՀՀ օրենքով տրամադրված նույնականացման քարտում թե ոչ), որոնք շտկման համար տրված ժամանակահատվածի ավարտից հետո մասնակցի կողմից ամբողջությամբ չեն շտկվել (մասնավորապես՝ Հավելված 1 դիմում հայտարարությամբ ներկայացված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումով կրկին բացակայել է իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը) և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

«Արեգակ արդար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02828801, գործունեության հասցեն՝ ք Երևան Խորենացի 47շ. բն.149) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2/24/2025

X

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161 **Հ. ՀԱԿՈԲՅԱՆ**